ՆԱԻՐԻ, ԲԻԱՅՆԱ, ՈՒՐԱՐՏՈՒ ԵՎ ՀԱՅՔ ԵՐԿՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ Ա. Հ.

Նաիրի, Բիայնա, Ուրարտու և Հայք երկրանունները մշտապես եղել են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այդ ուղղությամբ կատարվել են ստուգաբանական բազմաթիվ փորձեր: Սակայն հարցն իր վերջնական լուծումը դեռևս չի ստացել:

Հայտնի է, որ ասուրական արձանագրություններում Ասորեստանից արևելք և Կաշիարի (Մասիուս) լեռներից հյուսիս ընկած ցեղային երկրների ընդհանրական անվանումը եղել է Նաիրի (Na'iri), որն առաջին անգամ վկայվել է Ասորեստանի Թուքուլթի-Նինուրտա թագավորի (մ.թ.ա. XIII դ. երկրորդ կես) արձանագրություններից մեկում[1]: Ընդունված է երկրանունը մեկնաբանել որպես Գետերի եր-կիր («աքքադ. naru - «գետ» բառից»)[2]: Առաջարկվել է Կրակի երկիր ստուգաբանությունը[3], ինչպես նաև լեռնաշխարհ բացատրությունը[4]: Հարկ է ընդգծել որ տեղանվան մեջ ակնհայտ է հայկական տարրը: Na- առաջին բաղադրիչը («որ և գրի նայ՝ նոյն հնչմամբ. Որպէս թէ՝ Նայեա. տես ահա…»)[5] համարվում է «Բնիկ հայ. բառ՝ հնխ. no - «այն» դերանունից»[6]: Հավաստիորեն որոշվում է նաև iri/ire բաղադրիչը: Այն աշխարհագրական անուններում արտացոլված Ar/Ara դիցանվան տարբերակներից մեկն է[7]: Տեղանվան մեջ Արևաստծո անվան առկայությունը Na տարրի մեջ տեսանելի է դարձնում արեգակին բնորոշ՝ երևան եկող, ծագող, հայտնվող, հառնող բովանդակությունը: Հետևաբար, Նաիրի երկրանունը նշանակում

---

[1] *Տե՛ս* **Дьяконов И. М.** *Ассиро-вавилонские источники по истории Урарту (Вестник древней истории, 1951, N 2, с. 267-268).*

[2] *Տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 8, Ե., 1982, էջ 145-146:*

[3] *Ըստ Մ. Գավուքճյանի՝ «Նաիրի բառը սեմական է եւ գալիս է Հայկական լեռնաշխարհի հարաւային հարեւանն եղող սեմական աշխարհի լեզուներից: Ասորերէն nuira կամ nora նշանակում է «կրակ», սեմական բոլոր լեզուներով nor նշանակում է «լոյս», արաբերէն նար նշանակում է «կրակ», նարիյ նշանակում է «կրակային» (* **Գավուքճյան Մ.,** *Ուսումնասիրություններ հայոց հնագույն պատմության, Ե., 2010, էջ 63):*

[4] *Վ. Խաչատրյանի համոզմամբ՝ «Նաիրին կարելի է ստուգաբանել որպես ng4-a «քար» և i-ri «բնակավայր» արմատներից կազմված տեղանուն …: Այդ բառերը ասսուրերենում շումերական փոխառություններ են: Հետևաբար, Նաիրին նշանակել է «լեռնաշխարհ», որը աշխարհագրական անուն է եղել» (* **Խաչատրյան Վ.,** *Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում (Հայոց հին պատմություն), Ե., 1998, էջ 83):*

[5] *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. II, Ե., 1981, էջ 383: Նկատենք, որ տեսնելը՝ նայելը, առնչվում է աչք հասկացությանը և սկզբնապես նշանակել է «ճրագ», «արև», «լուսին» (* **Марр Н. Я.** *Избранные работы, т. V, М.-Л., с. 411, 463).*

[6] *Տե՛ս* **Աճառյան Հր.,** *Հայերեն արմատական բառարան, (այսուհետև՝ ՀԱԲ), հ. III, Ե., 1977, էջ 416:*

[7] *Տե՛ս* **Տերյան Ա.,** *Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Ե., 2002, էջ 67:*

է Արևի երկիր (բառի բուն իմաստով՝ ծագող /ելնող, բարձրացող/ լուսատու), որը պայմանավորված է եղել տեղաբնիկների դիցաբանական պատկերացումներով:

Ըստ ասուրական արձանագրությունների՝ մ.թ.ա. IX դ. առաջին կեսին Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում ձևավորված պետությունը զբաղեցրել է նաիրյան երկրների տարածքը[8]: Այդ մասին է վկայում նաև Սարդուրե I-ի՝ Նաիրիի թագավոր տիտղոսը[9]: Նկատենք, որ «Թուդխալիյաս IV-ը (մ.թ.ա. 1255-1233 թթ.) և Թուքուլթի-Նինուրթա I-ը (մ.թ.ա. 1244-1208 թթ.) ժամանակակիցներ են: Սակայն խեթական թագավորը Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանները հիշատակում է Հայասա, իսկ Ասորեստանի տիրակալը՝ Նաիրի երկրներ անուններով»[10]: Հարկ է նշել, որ Նաիրի ընդհանրական անունը հատուկ է եղել նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան և հարավային հատվածներին[11]:

Նաիրի անվան ստուգաբանությունը բերում է այն համոզման, որ Հայկական լեռնաշխարհի ազգագավառներում Ar/Ara աստծո պաշտամունքը եղել է ընդհանուր: Իր բացառիկ նշանակությամբ նա բիայնական պետության դիցարանում հանդես է եկել որպես գլխավոր աստվածություն[12]: Հիշատակության է արժանի այն, որ I դարի հեղինակ Հովսեպոս Փլավիոսը, տարբեր ժողովուրդների ցեղային անվանումներն առաջացած համարելով Նոյ Նահապետի հետնորդների անուններից, նշում է, որ

---

[8] **Ադոնց Ն.**, *Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 84-87: Մ.թ.ա. IX դ. առաջին կեսին բիայնական պետությունը զբաղեցրել է բավական ընդարձակ տարածք: Ըստ ասորեստանյան աղբյուրների՝ նրա սահմաններն արևմուտքում ձգվում էին Արևմտյան Տիգրիսի ակունքից մինչև Արևմտյան Եփրատի ակունքն ընկած գծով: Հյուսիս-արևելքում թագավորության սահմանը հասնում էր Ուրմիա լճի հյուսիսային առափնյա շրջանը, հյուսիսում՝ մինչև Արարատ լեռան շրջակայքը: Հարավ-արևելքում սահմանը տարածվում էր մինչև Արդինի-Մուծաժիրի տարածաշրջանը, հարավ-արևմուտքում (Վանա լճից հարավ)՝ Խուրուշկիա թագավորությունը (նույն տեղում, էջ 87,* **Меликишвили Г. А.**, *Урартские клинообразные надписи, М., 1960, с. 15).*

[9] **Ադոնց Ն.**, *նշվ. աշխ., էջ 149:*

[10] **Խաչատրյան Վ.**, *նշվ. աշխ., էջ 82:*

[11] *Է. Ա. Գրանտովսկին Նաիրյան երկրների զբաղեցրած տարածքի մասին գրում է. «Ըստ Գ. Ա. Մելիքիշվիլու և Ի. Մ. Դյակոնովի, «Նաիրի» տերմինը Շամշի -Ադադ V-ի օրոք ընդգրկել է նաև Մարաստանը: Սակայն դրա համար իր հե րթին հիմք է հանդիսանում մ.թ.ա. 820 թ. ցուցակի տիրույթների վերագրումը Մարաստանին…: Նաիրի հասկացության ընդլայնումը Շամշի-Ադադ V-ի ժամանակաշրջանում անվիճելի է. այն կարող է վերաբերել մերձուրմյան շրջանի երկրներին, սակայն մինչև Վանա լիճ և Ուրարտու ընկած շրջանները Շամշի-Ադադ V-ի օրոք նույնպես ընդգրկվում են Նաիրի ընդհանուր հասկացության մեջ»* (**Грантовский Э. А.** *Ранняя история иранских племен Передней Азии, М., 1970, с. 191):*

[12] **Ղարագյոզյան Ա.**, *Հալդե դիցանվան ստուգաբանության հարցի շուրջ [Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու (այսուհետև՝ ԳՊՀ), 2011, N 13, էջ 205]:*

Հայաստանը հաստատեց Արամոսի որդի Ուրոսը[13]: Նկատենք՝ Ուրոս (հմմտ. Uraš/Aras) անունն ընկած է Uraštu (Ուրաշտու) երկրանվան հիմքում: Արամոսը կամ Արամը ընկալվել է որպես հայոց հնագույն՝ արևի աստված[14]: Բնականաբար, Ուրոս արևորդին կարող էր ըմբռնվել և երևան գալ որպես վաղորդյան արևի՝ արշալույսի աստված՝ անձնավորելով Արա Գեղեցիկին[15]: Հայոց ավանդական պատմության մեջ ևս Արամի որդին համարվում է Արան[16]: Վերջինիս որդին՝ Արայան Արան (=արևորդի) նույնպես արևային աստվածություն էր, որի մասին վկայում է նրա երկրորդ՝ Կարդոս[17] անունը (հմմտ. sard/kard=արև[18]): Արևային աստվածությունների ազգակցական կապը, հերթագայությունը և առանձնացումը ենթադրում են դրանց համապատասխանությունն ամեն օր հառնող և մեռնող Արև աստվածության և նրա մշտական ուղեկից Արուսյակ (=Անահիտ)[19] մոլորակի երկու դրսևորումներին (Լուսաբեր և Գիշերավար): Այս շարքը համադրելի է բիայնական դիցարանում խմբավորված աստվածությունների առաջին եռյակի (Խալդե, Շիվինի, Թեյշեբա) հետ: Ընդ որում, պաշտվող գլխավոր աստվածության և նրա երկնային խորհրդանիշի անունն արտացոլվել է բիայնական թագավորների անվանումներում[20]:

Բիայնական պետության տարածքը համարվել է իշխող թագա- վորական տան տիրույթը: Այդ իրողությունը երևան է գալիս, երբ "Biayna" անվան "ay-na" բաղադրամասին տրվում է «երկիր» բացատրությունը (հմմտ. ուրարտ. "ay" «հող» գծագրորեն "ai" - ay+ na «հող», «երկիր»)[21], իսկ bi հատվածը դիտվում է որպես bir - ber (= տոհմ, ցեղ, տուն) բառի մնացուկ[22]: Այսինքն՝ «(թագավորական) տոհմի, ցեղի երկիր» կամ, այլ կերպ ասած, արևորդիների (Արևաստծո զարմ, սերունդ)երկիր: Bi տարրը համադրվել է նաև արև, կրակ, վառվել հասկացությունների հետ[23]: Այս

---

[13] *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հին հունական աղբյուրներ, Ա, Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Մ. Կրկյաշարյանի, Ե., 1976, էջ 56:*

[14] **Ղարագյոզյան Ա.,** *Թեգարամա (Թոգարմա) քաղաքի տեղորոշման հարցի շուրջ [ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր), 2011, N 4, էջ 8]:*

[15] *Հետաքրքրական է, որ արշա (վաղորդյան արև) բառը նշանակել է նաև ձի (***Մարր Ն. Յ.**, *նշվ. աշխ., էջ 134):*

[16] *Տե՛ս* **Մովսիսի Խորենացւոյ** *Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913, էջ 19, 21, 48:*

[17] *Նույն տեղում, էջ 50: Հիշատակելի է, որ kard((*kord) բառարմատն առկա է Կորդուք տեղանվան և կարդուխ (***Քսենոֆոն,** *Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Ե., 1970, էջ 81-83, 89, 91-93, 122, 197) ցեղային անվան հիմքում:*

[18] **Մարր Ն. Յ.,** *նշվ. աշխ., էջ 124:*

[19] *Տե՛ս* **Աճառյան Հր.,** *Հայոց անձնանունների բառարան, հ. IV, Ե., 1948, էջ 17:*

[20] **Ղարագյոզյան Ա.**, *Գեղամա երկիր (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Ե., 2004, էջ 24-25, ծան. 9,* **նույնի՝** *Վանի թագավորության արքայատոհմի ծագման հարցի շուրջ (ԳՊՀ, 2011, էջ 199-202):*

[21] **Մարր Ն. Յ.,** *նշվ. աշխ., էջ 492:*

[22] *Նույն տեղում, էջ 522:*

[23] *Նույն տեղում, էջ 474:*

դեպքում երկրանունը ստանում է Արևի երկիր բացատրությունը, որն իմաստի առումով համապատասխանում է Նաիրի երկրանվանը: Այդ ստուգաբանությունները ոչ թե հակասում, այլ լրացնում են միմյանց: Այս կապակցությամբ նշենք, որ եթե Ուրուատրի/Ուրատրի երկրանունն իր հերթին նշանակել է Արևի (= Արամի) երկիր[24], ապա նրա բնիկ տերերն, ըստ երկրանվան, նույնպես պետք է կոչվեին արևորդիներ, որը, անշուշտ, արտահայտվել է [lu]ururde տերմինով՝ որպես իշխող դասի ներկայացուցիչների անվանում[25]: Այս առումով հետաքրքիր է, որ ասուրական աղբյուրները Ռուսա I (մ.թ.ա. 735-713 թթ.) և Արգիշթե II (մ.թ.ա. 713-685 թթ.) արքաներին անվանել են ուրարտայա[26] (=[lu]urude): Հարցի ուսումնասիրության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հետևյալ դիտարկումը: Կորդվաց աշխարհն Աստվածաշնչում և հայ պատմագրության մեջ հայտնի է Արարադի երկիր անունով[27]: Սեմական լեզուներում երկրանունը վկայվել է Qardū, Qardo, Qarda ձևերով[28]: Այդ անունով կոչվել է նաև Արարադ լեռը[29], որը սեպագրով վկայվել է Արարդի (<*Արարտու[30] = Ուրարտու) գրությամբ: Ընդ որում, եթե նկատի ունենանք Urarṭu (=alarōd «արևորդի»[31]) և Uraştu երկրանունների համապատասխանությունը[32], ապա կարելի է արձանագրել, որ, ի տարբերություն Կարդու երկրանվան, որն արտահայտել է Արևի երկիր իմաստը, Ուրարտուն նշանակել է Արևորդիների երկիր: Արարադի երկիրն անվամբ և տեղագրորեն համապատասխանում է Արատային, որը համարվում է Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումը (մ.թ.ա.

---

[24] Ղարագյոզյան Ա., *Թեգարամա (Թոգարմա) քաղաքի տեղորոշման հարցի շուրջ, 2011, էջ 8:*

[25] Ղափանցյան Գր., *Ուրարտուի պատմությունը, Ե., 1940, էջ 133,* Меликишвили Г. А., *նշվ. աշխ., N 155, տող 11, ծան. 8,* Կարագեոզեան Հովհ., *Սեպագիր տեղանուններ, Ե., 1998, էջ 45: «Բասկերենը ur երկնքից te-ի (երեխա) հավելումով տալիս է ածանցյալ urte բառը՝ բառացիորեն երկնքի որդի»* (Марр Н. Я., *նշվ. աշխ., էջ 421): Սակայն «արևն անվանվել է ըստ երկնքի, ինչպես մասն ամբողջի»* (Марр Н. Я., *նշվ. աշխ., էջ 463): Նկատենք նաև, որ ուրարտ.* [lu] *ururde տերմինի և բասկերեն urte բառի միջև եղած իմաստաբանական կապն ակներև է (հմմտ. հուն., լատ. ortus «ծագեալ, սերեալ», լիւկ. urtu «օրինական», ալբան. rit «աճել», հայ. «որդի» (տե՛ս ՀԱԲ, հ. III, էջ 576-577):*

[26] *Տե՛ս* Կարագեոզեան Հովհ., *նշվ. աշխ., էջ 176:*

[27] *Նույն տեղում, էջ 278:*

[28] *Տե՛ս* Հարությունյան Բ. Հ., *Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 2001, էջ 279:*

[29] *Տե՛ս* Գավուքճյան Մ., *նշվ. աշխ., էջ 64: Հիշատակելի է, որ «Ըստ տեղական ավանդության՝ այդ լեռան վրա ջրհեղեղից հետո կանգ է առել Նոյի տապանը»* (Երեմյան Ս. Տ., *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 39):*

[30] *Տե՛ս* Дьяконов И. М., *նշվ. աշխ., էջ 285, ծան. 12:*

[31] *Հմմտ. "Urartu կամ Alarod (<*Ararod)=Ararat"* (Марр Н. Я., *նշվ. աշխ., էջ 3, 124): Էթնիկ անունը բաղկացած է հնդեվրոպական ծագում ունեցող ar=al/ala (իմա՛ արև) [տե՛ս* Ղարագյոզյան Ա., *Հալդե դիցանվան ստուգաբանության հարցի շուրջ, էջ 205-206) և rōd (=որդի), ՀԱԲ, հ. III, էջ 576-577) բառարմատներից]:*

[32] Марр Н. Я., *նշվ. աշխ., էջ 124:*

XXVIII-XXVII դդ.)[33]: Ըստ շումերական մի բնագրի՝ Արատայի ժողովուրդը համարվել է Արևաստծո կողմից գերադասված ժողովուրդ[34]:

Հավելենք, որ «հին արևելյան պետություններում ժողովուրդ հասկացության մեջ չէր մտնում պարտադիր ցեղային միասնությունը, այլ ենթադրում էր այս կամ այն պետության սահմաններում ապրող մարդկանց ամբողջությունն առանց գերիշխող տարրի պատկանելության»[35]: Այսուհանդերձ, արտոնյալ ցեղին պատկանող մարդ գաղափարը կարող էր դրսևորվել որոշակի տերմինով, որը ժամանակի ընթացքում կվերածվեր ցեղանվանման: Հատկանշական է, որ «հայերը սեփական անվամբ ինքնորոշում են իրենց, և դա է ժամանակակից հայ բնակչության, բառի բուն իմաստով՝ նրա որոշակի հասարակական խմբի իրական՝ հնագույն անվանումը»[36]: Ինչպես հայտնի է, Վասպուրականի Հայոց ձոր (Երվանդունիք) գավառի Աստվածաշեն գյուղի արևմտյան մասում, ժայռի գագաթին գտնվող՝ Հայք դաստակերտի (հետագայում՝ Հայկաբերդ[37])՝ սեպագրով վկայված անունը եղել է Սարդուրիխինիլի[38]: Սարդուրի անվան մեջ առկա է Արևաստված գաղափարը, որը փաստորեն պահպանվել է այժմ ավերակ Աստվածաշեն[39] գյուղի անվան մեջ: Ուստի միանշանակ է, որ Սարդուրիխինիլի և Հայք՝ տեղանունները համարժեք հասկացություններ են: Բնականաբար, Հայքը որպես երկրանուն նույնպես նշանակել է Արևի երկիր, իսկ հայ ցեղային անվանումը՝ արևորդի: Այդ իմաստով՝ հայ

---

[33] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Ե., 2007, էջ 48, ծան. 1:

[34] Նույն տեղում, էջ 48:

[35] Пиотровский Б. Кармир-Блур, результаты раскопок 1939-1940 гг., Е., 1950, с. 9.

[36] Марр Н. Я., նշվ. աշխ. 206:

[37] Ըստ հայոց ավանդական պատմության՝ Հայք դաստակերտը կառուցել է հայոց անվանադիր նախնի Հայկ նահապետը, տիտանյան Բելի (Ներբրոթ) դեմ հաղթական ճակատամարտից հետո. «Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք, վասն հաղթութեան պատերազմին» (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 37):

[38] Տե՛ս Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Ե., 1991, էջ 334:

[39] «Հ-ի ավերակներն ուսումնասիրել և նկարագրել են Ն. Մարգիսյանը, Մ. Միրախորյանը, Լեհման-Հաուպտը և Հ. Օրբելին: Բերդի հվ. և հս. կողմերում պահպանվել են տաշածո խոշոր վիմաքարերով (1մ³ մեծությամբ) կառուցված (կիկլոպյան շարվածք) պարիսպների մնացորդները, որոնք լեռնագոտուց ձգվում են մինչև գագաթը: Հ-ի միմյանց կից երկու ամրոցները նույնպես ամրացվել են հաստահեղույս պարիսպներով: Բերդը թիկունքից պաշտպանվել է հս-հվ. ձգվող ձեռակերտ խրամատով (լայնքը՝ 14 մ): Լեռնագագաթից երկու ժայռափոր ուղիներ, աստիճանաբար ընդարձակվելով, տանում են դեպի բերդը: Բերդապարիսպների ներսում, քարանձավներից վերև նշմարվում են քարե հիմքերով և հում աղյուսով կառուցված բոլորակ բնակարանների հետքեր: Հ-ում հայտնաբերվել են ուրարտ. կնիքներ, որոնցից մեկը (պահպանվում է Էրմիտաժում) պատկերում է ձեռքերը վեր պարզած թևավոր աստվածուհի, աջ կողմում՝ այծ, ձախում՝ սրբազան ծառ՝ կողքերից երկու աղոթող, իսկ նրանց գլխավերևում՝ կիսալուսին: Հ-ում գտնվել են նաև մետաղյա երեքթևյան նետասլաքներ, սեպաձև արձանագրությամբ խոշոր կարասների մնացորդներ: Լեռան ստորոտին՝ Աստվածաշենի մոտ, պահպանվել է Սարդուրի Բ թագավորի բևեռաձև արձանագրությունը՝ բերդաշինության մասին» (Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 6, Ե., 1980, էջ 167):

*ինքնանվանը (որից ունենք Հայկ անձնանունը և Հայք երկրանունը) իր նշանակությամբ և արտասանությամբ համապատասխանում է Āyu- (<*Āya)-ն՝ Ռիգվեդայում (մ.թ.ա. II հազ. կես-X դդ.)[40] վկայված արիական ցեղերից մեկի անունը[41]: Բիազա աստծուն նվիրված օրհներգում այն «արտոնյալ ցեղի մարդ հասկացության նշանն է՝ իբրև անվանում»[42]: Հետևաբար, հայերի առասպելական նախնին՝ Հայկը, ըստ իմաստի, երևան էր գալու որպես Հայոց աշխարհին պատկանող, նրան հովանավորող աստծո մականուն:*

Բնականաբար, իրենց նշանակությամբ հայ և արմեն անվանումները եղել են համարժեք[43]: Այսինքն՝ նրանց համապատասխանությունը բացարձակ է:

К ВОПРОСУ ОБ ЭТИМОЛОГИИ ТОПОНИМОВ *НАИРИ, БИАЙНА, УРАРТУ* И *АЙК*

КАРАГЕЗЯН А. А.

Резюме

Топоним Наири означает “страна Солнца”, но при этом “Солнца восходящего”.

В топониме “Biayna” составная часть “ay-na” рассматривается как “страна”. Частица Bi восходит к слову bir/ber (=род, племя, дом), т. е. страна /царского/ рода, племени или “страна детей Солнца” (букв. семя Солнца). Элемент Bi сопоставляется также с понятиями солнце, огонь, гореть, и в таком случае топоним получает толкование “страна Солнца”. Упоминаемая в Библии и армянской историографии “страна Арарад” клинописно засвидетельствована как Арарди (<*Арарту=Урарту). Соответствие топонимов *Urarṭu(=alarōd)* и *Uraštu* предполагает толкование топонима в качестве “страны детей Солнца” в отличие от названия Уруатри/Уратри, означающего “страна Солнца”.

В названии города-крепости Айк (*Հայք*) провинции Васпуракан (округ Айоцдзор/Ервандуник), упоминаемой в клинописной надписи Сардурихинили, присутствует понятие бога Солнца, которое сохранилось в названии с. Аствацашен

---

[40] *Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, Ե., 1983, էջ 659:*

[41] *Տե՛ս* **Дюмезиль Ж.** *Верховные боги индоевропейцев, М., 1986, с. 77.*

[42] *Նույն տեղում, էջ 218, ծան. 45: Իմաստաբանորեն սրան համահունչ է Ռուսա II-ի (մ.թ.ա 685-645) Յայա պատվանունը: Այն վկայվել է գուշակային մի տեքստում, որը պարունակում է Արևի աստված Շամաշին ուղղված հարցումներ (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. I, Ե., 2007, էջ 137):*

[43] *Հայագետների կողմից կատարված հայ և արմեն անվանումների՝ ուշադրության արժանի մեկնաբանությունների քննության մասին տե՛ս* **Ջահուկյան Գ. Բ.**, *Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Ե., 1987, էջ 279-288:*

(букв. основанный богом /Солнца/). Топонимы Сардурихинили и Айк – равнозначные понятия. Следовательно, топоним Айк также означал “страна Солнца”, а этноним hай (*հայ*) – “дети Солнца”, которому по значению и произношению соответствует *Āyu(<*Āya)*- название одного арийского племени, засвидетельствованного в Ригведе, в гимне, посвященном богу Бхага.